

ԳԻՒՂԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

ՍԱՐԳԻՍ ՏԷՐ-ԶԱՔԱՐԵԱՆՅԻ

Անցեալ տարի, երբ Բաքուի խօլերալի պատճառով, գործատէրերը ստիպւած եղան դադարեցնել իրանց դորձերը, մնացի պարապ և գնացի հալրենիքս, որը Զանգեազուր գաւառի գիւղերից մէկն էր ուսումնական սահմանագլխում։ Անցաւ ամբողջ Զանգեազուրը, ոչ առաջին անգամ տեսաւ շատ գիւղեր, և տպաւորութիւնները որ ստացաւ՝ ուղղակի ճշող էին։ Ճշող անգամ, որ նրանց տակ երկար մնացողը կարող է դժուար թուեմ հինգ մեր գիւղից, որը համեմատաբար լաւ հանգամանքների մէջ է, իսկ արտաքուստ նոյն իսկ լաւ տպաւորութիւն է թողնում մարդու վրա։

Նորա մասին խօսել են նոյն իսկ արտասահմանի չալտնի ճանապարհորդներ, որոնք եկել են մեր երկիրը ուսումնասիրելու և խօսել են գովասանքով, որպէս ալդ վալելէ օտարին, որը ոչ ժամանակ և ոչ կարիք ունի ուսումնասիրելու մեր կեանքի՝ ներքին հանգամանքները։ Ահա հէնց ալդ գիւղը ունի երկու հարիւր տուն բնակիչ և երկու հարիւր դեպետութիւն հող, ոչ հաւասարապէս բաժանւած բնակիչների վրա։ Ամենաշատ հող ունեցողները, որ թուով շատ սակաւ են (հինգից տասն ընտանիք), ունեն 4—5 դեպետութիւն հող և ալդալիսի ծուխերը, ունենալով մի քանի ամուսնացած, որդկերանց տէր դարձած անդամներ, պէտք է բաժանւեն, դառնան մի քանի ծխեր, որոնցից իւրաքանչիւրը պէտք է ստանալ կրկին մի մի դեպետութիւն հող։ Բնակիչների մեծամասնութիւնը հաշի առնելով՝ ծուխը կէս դեպետութիւն հող ունի։ Կան և ալդալիսի ծխեր, որ ունեն 1/2 դեպ. հող, կրկնում եմ երկու հարիւր տունը ունի երկու հարիւր դեպետութիւն հող։ Շատ քիչ ծխեր կան, որ բաժանւելու կարիք չեն զգում և եթէ ալ ծխերը բաժանւեն՝ գիւղը կարող է առնուազը վեց հարիւր ծուխ դառնալ։ Ուրեմն ծխին ալ ժամանակ կընկնի 1/2 դեպետութիւն հող։

Այդպէս, հողը սարսափեցնելու չափ պակաս լինելով, պարզէ, որ չի կա-

բողանում կերակրել իւր բնակիչներին, որոնք քաղցած մնալ չկարողանալով և ուրիշ ելք չգտնելով՝ ահագին քանակութեամբ հեռանում են Կողկասեան ալ և ալ քաղաքներ մի կտոր հաց գտնելու համար։

Աղքատութեան դաւադանը քշում է դէպի օտարութիւն տասն երկու տարեկան մանուկից սկսած մինչև լիսուն տարեկան մարդը, զրկելով մէկին հօր, մօր և քրոջ սիրուց, միւսին նշանածի, կնոջ և երեխաների սիրուց։ Նա քշում է չինալելով ոչինչ և ոչոքի, ուշադրութիւն չդարձնելով արտասուքի և հառաչանքի վերա, քշում է ամենքին և անդադար։ Աղպիտով գիւղի արական սեռը գտնւում է օտարութեան մէջ, իսկ գիւղում մնում են մանուկներն ու ծերերը, ալսինքն նոքա, որոնք դուրսը գործելու ընդունակ չեն։

Մի խօսքով, գիւղացին զրկւելով բաւականութիւն տուղ հողից, ընկնում է անբնական պաւմաններով մէջ, որից առաջացած չարիքները ոչ թիւ ունեն ոչ համար և որից կեանքի պատկերը դարձել է դժոխալին, բառի բուն նշանակութեամբ։

Եւ աղպէս է ամբողջ Զանգեզուրում որի արական սեռը, կրկնում եմ ամբողջապէս օտարութեան մէջն է փչանում, իգականը սաճը։

«Ֆիզիկապէս փչանում են»։ աղ խօսքերը լաւ չեն պարզում իրերի իսկական դրութիւնը, խօսեմ թւանշաններով։ Մեր երկու հարիւր տուն ունեցող գիւղում կան 96 հատ ալրի կանալք, որոնց ևս ճանաչում եմ լականէ լանձանէ. իցէ լինեն և ալնալիսները, որոնց չեմ ճանաչում։ Իննսուսուն և վեց հատ, չպէտք է մոռանալ ալն որ և ալք 96-ից 60 - 70-ը բողբոլվին երկտասարդ կանալք են։

Աղք ամենաքիչը ցուց է տալիս թէ որքան անժամանակ մնում են մեր երկրի ալր մարդիկը։ Եւ իսկապէս, ինչ երկաթի կազմածք կարող է դէմ կենալ աղքատ անբնական պաւմաններին, որոնց մէջ գտնւում են մեր գիւղացիները օտարութեան մէջ։ Չի կարելի ասել, որ գիւղացին չի աշխատում ալք զարհուրելի դրութիւնից մի ելք գտնելու օրինակ մեր գիւղի հասարակութիւնը ահագին ուժէ գործ դնում պահպանելու ուսումնարանը, որից նա սպասում է իր աղքատութիւնը։ Աղք ուսումնարանի համար նա ծախսում է աւելի շատ, քան թող են տալիս իր բնական միջոցները. և որովհետեւ բնական միջոցը բաւական չի տալիս՝ դիմում են արհեստականին. օրինակ՝ ամենաչնչին վատ վարմունքի համար գիւղացուն տուգանքի են ենթարկում «լօգուտ ուսումնարանի» և ամենալիւր գործերի համար նոյնպէս ուրիշ պատիժ չկալ—տուգանք «լօգուտ ուսումնարանի» և ալն և ալն։ Մի անգամ մի քանի հոգի ժողոված էինք ընկուզենու տակ, ուր սովորաբար ժողովում է ամարանոցում գիւղի հասարակութիւնը. մի կատակախօս գիւղացի ուզում էր փռշտալ, բալց իրան պահեց. երբ նորան հարցրին ինչու չփռշտաց՝ «շտրափ կանին լօգուտ ու»

ստամնարանի», ասաց: Տանուտէրը, որ ալդտեղ էր և լսեց սրախօսութիւնը, գիւղացուն տուգանքի ենթարկեց 50 կոպ. լօզուտ ուսումնարանի: Եւ ալդպիսով կարողանում են, վալ էնպէս, միայն ուսումնարանը պահպանել, իսկ մնացած կարիքները միում են կարիքներ առանց դարմանի: Գիւղացիք բազմանում են: Տարէց տարի անընդհատ վարւող հողը քանակութեամբ չի շատանում, չատկութեամբ ընկել ուժանպատ է դարձել. բոխիկ չկալ, դեղատուն չկալ, նոյն իսկ միւժակալ դիւղերի հետ հաղորդող ճանապարհներ չկան և ալլն և ալլն: Ուսումնարանի ծախքերի հետ ծանօթանալով ես տեսալ որ ի միջի ալլոց ձեռագործի ուսուցչունուն վճարում է տարեկան երկու հարիւր մանէթ, դասատները մաքրող ծառալին քառասուն մանէթ և ալլն:

Ծանօթանալով ուսուցչունու հետ տեսալ որ նա իր հագնելու շորերը լաւ կարել չի կարողանում—նա սովորեցնում է Ծրանսիալից բերած գարուտի թելով «լամպի տակ» պատրաստել, Ռուսիալից բերած բամբակի թելով «կրուժեւա» և ալլն դորա նման փարթամութեան բաներ չինել, ալն էլ ի հարկէ ալնպիսի տեսակից որ վաճառել չի կարելի նոյն իսկ առած թելերի գնով, առանց աշխատանքի վարձատրութեան...

Մի անգամ, երբ նոյն ընկուղենու տակ բաւական թւով մարդիկ կալին հաւաքած, զրոցի ժամանակ ես խօսացի գերմանացի կոլոնիատների սովորութեան մասին և բացատրեցի, որ ալս վերջինները, երբ մի կոլոնիալում բազմանում են ալնքան որ հողի պակասութիւն է զգացում՝ մի ուրիշ տեղ հող են գնում և հասարակութեան մի մասին՝ տուն կառուցանելու և գիւղատնտեսական պարագաներ գնելու համար՝ փող տալով, ուղարկում են ալնտեղ, ուր պատրաստի միջոցներով նոր բնակութիւն է հաստատում, նոր կոլոնիա ստեղծում:

—Որտեղից են վերցնում գերմանացիք ալդքան փող, հարցրին մեր գիւղացիները, իցէ հարցնեն և ընթերցողներիցս մի քանիսը:

Գերմանացի կոլոնիատները գիտեն, որ իրանց հարկաւոր է հող, որի վրա պէտք է բնակւեն և որը պիտի իբրեւ մալր նոցա կերակրի: Յետոյ գիտեն որ, ապրիլու միջոցներից չզրկւելու համար, պէտք է զարգացնեն իրանց միտքն ու խելքը և իրանց շրջապատող հասարակութիւնից չետ չմնան: Դորա համար էլ նոքա միշտ փշտում են, որ իրանց միշտ և միշտ հարկաւոր է հող, ուսում, արհեստագիտութիւն: Նոքա չեն մոռանում որ մարմինն ու հոգին հարկաւոր է զարգայնել զուգընթացաբար, որը կարելի է գլխաւորապէս հողի վրա. ալդ պատճառով էլ, երբ բնակութիւն են հաստատում մի տեղ, չեն մոռանում որ ալսօր բաւականացող հողը, 10—20 տարուց լեւոյ բաւական լինել չի կարողանալու, հետևաբար հէնց նոյն օրւանից մտածում են քսան տարուց փոռլ անելիքի համար: Նոքա հիմնում են հասարակական գանձարան, ուր մտնում են և տէրունա-

կան հարկերից բոլորովին անկախ հասարակական հարկեր ամեն մի զիւ-
ղացուց, և տուգանքներ և ուրիշ եկամուտներ: Օրինակ՝ մէկը կամեմունք է
կողմնիալում իրանութ բաց անել մանուֆակտուրայով կամ մի ուրիշ բանով
առևտուր անելու, նորանից ոչ ռժ ոչինչ չի գնի, մինչև որ հասարակու-
թիւնից պահանջած գումարը չտալ, և ալդ գումարը փոքր չի լինում, օրի-
նակ Անհնֆէլդ կողմնիալում, ուր 70 տուն բնակիչ կալ միալն, հալ խա-
նութպանը վճարում է հասարակութեան զանձարանին 700 մանէթ տարե-
կան: Հասարակական կասսան իր ստացած գումարները բաժանում է՝ հող
գնելու, ուսումնարան ու եկեղեցի պահպանելու, ճոր սերմիւ բերել տալու,
ճանապարհներ շինել տալու, մեքենաներ գնելու և այլն: Հողի համար
չետ գցած փողը, տարիների ընթացքում աճձեռմխելի մնալով, հասնում
է մեծ գումարի ալն ժամանակ, երբ եկտրների նոր սերունդը, չափահա-
սութեան հասած, զգում է «իր բոլն», «իր կտուրն» կարիքը:

Այն ժամանակ նորա համար առնում են հող, փողոց տալիս ձեռքը, օրհնում են և ուղարկում նոր տեղ նոր բնակություն հաստատելու Ամենքին չափով երեկելի գրող Գլէբ Ուսպենսկին, ճիշտ նկատելու իր լատուկ ընդունակությունը, գերմանացիների նոր սերնդին անընդհատ նոր տեղ փոխելը նմանեցնում է մեղուների ձագ գալուստը:

Տեղ շատ կը բռնէր, եթէ ես գրէի իմ զրուցը ամբողջովին: Մի քանի ջանքեր, որոնք գերմանացիներին ճանաչում են նոցա զրոյներով և որոնք կարծում են թէ ամեն մի կոտնիստ մի Գոթթէ, մի Շելլէր կամ մի Ֆրիտէ է՝ ստէպ բացականչում էին թէ ինչ համեմատութիւն տոգէտ հալու և լուսաւոր գերմանացու մէջ: Ոմանք էլ, պատասխանում էին «փող չկալ», «աղքատ ենք»:

Հարկադրած էի բացատրել, որ դերմանացի կոլոնիստները թէպէտև ամենքն էլ կարդալ գրել դիտեն, բայց ամենատարրական ուսում ունեն միայն. շատ անգամ աւետարան կարդալուց դէնը չի անցկենում նրանց գրագիտութիւնը: Իսկ աղքատութեամբ բացադրել հողի մասին հոգ չտանելը անհիմն բան է:

—Չէ որ զուգը ուսումնարանի համար կարողանում էք, տղայես թէ աշնայես, տարեկան երկու հազար մանեթ գտնել, ուրեմն մի հազար կամ 500 մանեթ էլ կարող էք գտնել հողի համար, ասացի ես:

—Չէ, չենք կարող, ծաղրալիզ անճարութեան ենք հասել, ասում էին գիւղացիք:

էին գիւղացիք:
— Ուրեմն, քանի որ ձեր ուլը միայն երկու հազար մանէթին է հասնում, ծախսեցէք ուսումնարանի վրա հազար հինգ հարիւրէ, իսկ հինգ հարիւրը կտո գցեցէք հողի համար:

Քաան տարուումը, միայն երեք տուկոս հաշւած աղ փողիւն, գուք կ'ունենաք 13,000 մանէթից աւելի գումար, որով և կարելի է 400—500 ղեկեաաւին հող ձեռք բերել ամենաքիչը:

Դուք կարող էք ալդ անել, արժէ, որ ձեր աղջկերքը կրուժեալի դասերը թողնեն և իրանց մալրերից ձրի սովորեն թել մանելը, շալ ու կտաւ գործելը, շորեր կարելը (դեռ չեմ ասում գորգ ու կապերտներ ի մասին), որոնք անհամեմատ և հարկաւոր են և օգտաւէտ: Եթէ ձիւտ է ալն, որ «աղքատ ենք, որովհետեւ տգէտ ենք», ոչ պակաս ձիւտ է և ալն, որ «տգէտ ենք, որովհետեւ աղքատ ենք»: Ուրեմն հարկաւոր է գիտութիւն ձեռք բերել, բաց ոչ ալնպէս, որ նորանով սպառւին մեր ուժերը ու ծալրակը անճարութեան հասնենք: Դորա համար էլ պէտք է, ուսման մասին հոգ տանելիս, հոգ տանենք և հողի մասին:

Կարող եմ հաւատացնել լարգելի ընթերցողներին, որ ևս ալդ մտքով եմ խօսացել և կարծում եմ, որ ալդ բալորի մէջ պախարակելու արժանի ոչինչ չեմ ասել: Բաց եկէք և տեսէք, որ գիւղական մի խումբ երիտաւարդներ, որոնք ընդհանրապէս վատ տղերք չեն, որոնց մէջ կալին ճոխ իսկ շատ և շատ լաւ տղերք, ինձ ուսումնարանի թշնամի հռչակեցին, որովհետեւ, նոքա, մեր մամուլի անընդհատ և ջերմ քարոզների ազդեցութեան տակ, տասը տարի է, որ իրանց ամբողջ ուժը գործ են դրել տարրական ուսումնարանի վրա, որը ճոցա ջերմ հաւատով պիտի վերացնի իրանց ախքառն ջերմ սիրով սիրած հայրենիքի անտեսական դառն դրութիւնը: Ճակատագրական գծադրութիւն չէ, որ ալսպիսի լաւ մարդիկ ֆանատիկոսութեան չափ հաւատալով տարրական ուսումնարանի ազատիչ գորութեան, անընդունակ են դառնում հասկանալ իրանց բարեկամի խօսքը: Բաց սրանք ապրելով ժողովրդի մէջ, նորա ուրախութեամբ ու ցաւով, մեծ բան կարող էին անել իրանց պրոպագանդայով, եթէ նա միակողմանի չլիներ:

Գերմանացիները, 1874 թւին երկաթուղու ալմանն Ձեզամ կաւարանից 15 վերստ հեռաւորութեան վրա հող առնելով, գիւղ են գցել, Անհնֆէլդ անունով: Ինձ պատահեց տեսնել ալդ գիւղը, նորա հիմքը դնելուց ուղիղ 10 տարի լետով, ալսինքն 1884 թ. սկզբում: Ձէի կարողանում հաւատալ աչքերիս. ես կարծում էի թէ կանգնել եմ Թիֆլիսի Միքայէլեան փողոցում: Խճուղած լալն փողոցներ, որոնց երկու կողմերից աւաակներ, սոււերախիտ և մրգի ծառեր, պլանով տներ, ամեն տան առաջ ծաղկոց, ամեն բակում մառան. գեղեցիկ հրապարակ, եկեղեցի, ուսումնարան և ալն: Ամեն կողմից լիութիւն և ունեւորութիւն էր բուրում: Ալն ժամանակ 70 ծուխ ունէր Անհնֆէլդը. ամեն մի ծուխ ծախում էր տարեկան 1500—2000 մանէթի գինի. բացի ալդ ճոքա պարապում էին թռչնապահութեամբ (հաւեր, բաղեր, սագեր և հնդուհաւեր), անասնապահութեամբ (ձիեր, կովեր, խոզեր և ոչխար) և հողագործութեամբ (ցորեն, գարի, հաճար, կորեկ, եգիպտացորեն, գետնախնձոր, քալամ, ճակընդեղ և ալն): «Երբ եկանք ալստեղ—ասաց ինձ տանտիկինս մի ալրի

կին—40 տուն էինք. առաջին երեք տարիները շատ նեղութիւն քաշեցինք, որովհետեւ սարքւած էինք, կլիմային սովոր չէինք. մեզանից շատերը մեռան, բաց չեալ, փառք Աստուծոյ, տեսնում ես, ես ալրի տեղովս որքան լաւ եմ ապրում. տուն, տեղ, ալգի, ձիեր, կովեր, թռչուններ, հացս, իւղս, միրքս ամեն ինչս տնիցս են. գինիս էլ տանս առաջին ծախում եմ, կանխիկ փողը ստանում եւ թոփ անում. Նրեք աղջիկ եմ մարդու տւել, բոլորին էլ առօք փառօք բաժինքով եւ ալն եւ ալնո:

Ուսումնասիրելով գեթամանցիներին ես տեսալ որ ճոքա բարձր զարգացման եւ խելքի տէրեր չեն. շատ հալ գիւղեր եմ տեսել, որոնց բնակիչները սրանցից անհամեմատ բարձր են. Հալից ոչ աւելի աշխատասէր են ոչ տնտես: Արբիլ էլ գիտեն, ալն էլ զորս պատերիցիւր Գաղանիքը ինչու մնէ, որ սոքա ալսպէս լիութեան մէջ են, մերոնք ոչ—Նորանում, որ սըրանց առաջնորդները ապրել են ժողովրդի մէջ, սովորեցրել են միաբանութեան եւ կազմակերպութիւն են տւել նորան, իսկ փողն ու լիութիւնը գալիս են իրանք իրանք եւ երեք չեն սպառւում, որոնց շնորհիւ գերմանացիք ֆիզիկապէս եւ բարոյապէս միշտ առողջ են մնում ամեն տեղ:

—Նրեի մի 20 տարուց չեալ ձեր բանն էլ դժւար կը լինի—նկատեցի տանտիրէնը—հողներդ կը պակասի, իսկ Անդրկովկասում ալսպիսի բերրի հողեր ձեռք բերելը ալնքան հեշտ չի լինի ինչպէս էր առաջ Մեծ իշխանի օրով: Երեւոյց ալրին «Անդրկովկասում! աշխարհը Անդրկովկասով հօ չի վերջանում, թող փող եւ միաբանութիւն ունենանք, հող կը գտնենք ամեն տեղ եւ նա լինի թող Պարսկաստանում,—մեզ համար ալդ միենունն է:

Նկատելի են ֆեկլդ կալոնիան չալտնի է իր հարստութեամբ, գինու աճադին արտահանութեամբ նոյն իսկ հռչակաւոր է նա. թողնում եմ նրանց, թողնում եմ եւ գերմանացիներին ընդհանրապէս, որոնց բոլոր կալոնիաները հարուստ են. թողնում եմ ճոքա ալն պատճառով, որ ալսպէս թէ ալնպէս շատ շատերն են համոզւած, որ ճոքա շատ զարգացած, արհեստագէտ, ջանասէր մարդիկ են. եւ դժւար է հաւատացնել որ ալդ ալդպէս չէ, որ ճոքա հալերիցն են սովորել եւ սովորում հողագործութիւն ու գինեգործութիւնը, իսկ շերամապահութիւնը ալսօր էլ մուտք չի գործել նոցա մէջ:

Ահա Միւսիսլի կալարանից 35 վերստ հեռու բլրի գլխին մի անջուր տեղ, մալականները գիւղ են դցել, խմանովկա անունով: Ալստեղ ալգեգործութիւն չկալ, պարապւում են վարուցանքսով, անամապահութեամբ, փոքր չափով թռչնապահութեամբ եւ աղարակագործութեամբ:

Սոքա ուսուցիչներ վաճառանոցից չեն աւնում, հալնելիքի մեծ մասը տանն են գործում կանեփից, կուհաափից եւ բրդից եւ իրանք էլ կարում. եւ ամեն մի տուն ծախում է տարեկան 1000 մանէթից աւելի ցորեն: Բացի

ալդ պարապուժեմ են և սալլապանութեամբ: Ունեորեն, և եթէ մի ժամանակ սոքա էլ աղքատանան հայերի պէս, ալդ կը լինի այն պատճառով, որ կազմակերպութիւն չունեն. չեն մտածում ապագայում գալիք հողի սակաւութեան մասին և ընդհանրութեամբ փող լետ չեն գցում, ինչպէս անում են գերմանացիները: Սոքա էլ ինչպէս և Անենֆելդցիք, չըլապատւած են թուրքերով. սոքա էլ հարցրի.

—Ձեզ չեն նեղում թուրքերը:

Гмъ! Татары то? ну мы не боимся ихъ!

Բայց ալդ քիչ է: Սրբ իվանովիկից մալականի սալլով գալիս էի Միսիւսլի ճանապարհի վրա գտնուող թուրք գիւղի միջով, անցնելիս փողոցում խաղաղող երեխայքը մալականիս գդակը նկատելուն պէս, ու՛ւա, ու՛ւա աղաղակելով փախան—ճիշտ այնպէս, ինչպէս մի 25 տարի առաջ հայ երեխաներն են եզել փախչում ու թագնւում թուրքի երեսօց:

Մարազան, Վարանցովկան և ալ մալականի կալոնիաները մեր երկրում ինչպէս և գերմանացիներինը, չաչտնի են իրանց հարստութեամբ: Պրիշիբում նոյն իսկ հրէաները ապրում են շատ հարուստ և ապահով և ալդ դրութեան մէջ կը մնալին շատ և շատ երկար, եթէ գերմանացիների պէս կազմակերպութիւն ունենալին և ընդհանրութեամբ գործէին. որովհետեւ փող ունենալուց լետող հող շատ կարելի է գտնել նոյն իսկ մեր երկրում և դեռ շատ տարիներ: Օրինակ Նուխաւ, Գանձակի, Ջաբրայիլի, Գէօզչալի գաւառներում, Ալազանի հովտում և ալլն. դեռ չեմ խոսում մեր հարեան Պարսկաստանի մասին. չէ՞ որ գերմանացիները սկսել են տարածւել և թիրքա-Հալաստանում:

Այս բոլորից լետող ինձ մնում է ասել, որ իսկապէս, կապիտալիստների (մեծ կապիտալիստների) հողի մէջ մտցրած կապիտալը, քանի նոքա իրանք ամենաշատը ընդունակ են թիֆլիզ ապրել և Վարալեագում ուրիշի ձեռքով հողագործութեամբ պարապելու, այն էլ հո՛ւմ նիւթը հէնց իբր հո՛ւմ նիւթ ծախելով՝ մեծ տոկոս բերել չի կարող և իսկի ցանկալի էլ չէ որ մեր հողերը ընկնեն հարուստ կապիտալիստների ձեռքերը (ինչ ազգից էլ որ լինեն նոքա), ինչպէս ալ ցանկանում են ուրիշները: Թող հողը ընկնի երկրագործի ձեռքը, ուղղակի այն մարդկանց ձեռքը, որոնք ընդունակ են նորան մշակել, նորա վրա քրտինք թափել, նորա վրա ապրել իրանց ընտանիքներով:

Փոքրիկ փողատէրերը, որ իրանց գրողներով առանձին-առանձին խանութներ են բաց անում և իրանք նոցա մէջ նստում մաշում իրանց սիրտն ու հոգին և որոնց ընտանիքները տանը պարապ սարապ նստում, ОТЪ НЕЧЕГО ДѢЛАТЬ բամբասանքներով են պարապում, նոցա համար ոչինչ այնքան ձեռնառու և օգտակար չէ, ինչպէս հողագործութիւնը. արժէ, որ նոքա խմբերով միացնեն իրանց փողերը, հողեր գնեն և հողի վրա հաստատելով գիւղատնտեսութեամբ պարապեն: Հողեր կան, կնկնում եմ, և նոցա ամենալն օր առնում են գերմանացիք և ալք և նոյն իսկ թուրքերը: